14 նոյեմբերի 2019 թվականի N 1605 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի N 1390-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը

ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի «Ներդրումային ծրագրի շրջանակներում «ԱՐԹԻԿԻ ՓՀԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ապրանքների ներմուծման դեպքում մաքսային և հարկային մարմինների կողմից հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետը երեք տարի ժամկետով հետաձգելու մասին» N 1390-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) հավելվածի 6-րդ կետի «Չափի միավորը» սյունակի «հատ» բառը փոխարինել «կգ» բառով, իսկ «Քանակը» սյունակի «2 700 000» թիվը՝ «90 000» թվով.

2) հավելվածը 7-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 8-9-րդ կետերով՝

«8.	5601	Բամբակ, մանածագործական նյութերից պատրաստված արտադրանք	կգ	5 400 000 000	2 500 000 000
9.	6310	Լաթեր օրտագործված կամ նոր	կգ	5 400 000 000	1 300 000 000».

3) հավելվածի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերության մեջ «4 272 254 000» թիվը փոխարինել «8 072 254 000» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. նոյեմբերի 18
Երևան